

ՀՏԵՄԵՐԸՆ

ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԵԸՑ

ՀԵՏՈՒ 6

«ՅՈՒՆԻՍԿՈՒՍ 1846»

ԹԻՒ 67



Քրիստափոր Կոլումպոս՝ Սալամանքայի ժողովոյն առջեւ։

Աս պատկերս որչափ որ խիստ նշանաւոր իր զաւակներուն անդրանիկը հետը առնել պատմութիւն մը կրներկայացրնէ մեզի լով, սկսեց ճամբորդութիւն ընել, հաց և Քրիստափոր Կոլումպոսի վրայով, տյեքան ջուր մուրալով՝ ճամբուն վրայ գտնուած վանքերուն դուռը հասած ատենը։ Ահը ջապէս յանձնարարական գիրով մը՝ կալող եղաւ Սպանիոյ Կաթալէն Թագուհիին առջեւը ելլելու ու իր համոզիչ խօսքերովը և մեծազոր խորհուրդներովը անոր սիրտը շարժելու։

Թագուհիին անմիջապէս հրաման քրտաւ իր խոստովանահօրը Ֆերդինանտոս Կաթալէն լայի՝ Քրատոյի վանահօրը, որ Սալամանքայի մէջ գիտունները մէկտեղ հաւաքէ, և Քրիստափոր Կոլումպոսին ըսածները քննեն։ 1484ին՝ ժողովը գումարեցաւ սուրբ Ստեփաննոսի վանքին մէջը, ուր տեղ հիւնելով իր յետին աղքատութիւնը։ Ուստի րաւեծար մարդասիրութեամբ ընդունեցին

Վոլոմպոս : Դոլովքին անդամները բոլորն ալ եկեղեցական էին . հոն հաւաքուած էին աստղաբաշխութեան , երկրաչափութեան , մաթէմատիքական և ուրիշ գիտութեանց վարժապետները , սպանիական եկեղեցւոյ բարձրաստիճան մարդիկ և քանի մը գիտուն կրօնաւորներ . Դոլովքին անդամներուն մեծ մասը նախապաշարմունքով լցուած էին առ երազատես մարդուն (տըգէտները տասնիկ կը կոչէին զանիկայ) յանդուգն դադափարներուն դէմ . և անոր առաջադրութիւնները՝ բոլոր աս գիտնականներուն հպարտութեանը սաստիկ դպչելով , ամէնքն ալ կը ջանային որ խաղբ ըլլայ ան . վասնորոյ այսպէս կըսէին . « Ենչ մեծամտութիւն է , երբ որ այնպէս կարծէ մէկը՝ որ իր գիտցած բաները՝ բովանդակ մէկալ մարդոցը խեղճէն վեր բաներ են » : Վրիտտափոր Վոլոմպոս անծանօթ նաւաւար մըն էր , բնաւ համալարանի մը մէջ կը թուած չէր , ասոր համար գիտունները զգոյշ եղան և չընդունեցին անոր բոլոր փաստերը :

Վասնորոյ մինակ , աներկիւղ կերպարանքով , և անթարթ աչօք կանգնեցաւ աս պատկառելի ժողովքին մէջը և սկսաւ իր զննութիւնները բացատրել և պաշտպանել՝ ինչպէս որ իր վարքը զրօրը կըսէ , փաստը և իրաւունքը՝ « որ Ղշխարհին : Նախ՝ մինակ սուրբ Ստեփաննոսի վանքին կրօնաւորները մօտիկ ըրին անոր ըսածները , ինչու որ բոլոր Սպանիայի մէջ անուանի էին ասոնք գիտութեանց մէջ : Վոլոմպոս ալ՝ աստղաբաշխութեան և երկրաչափութեան ասպայոյցներով կը հաստատէր իր կարծիքները . բայց ժողովքին միւս անդամները արհամարհանօք բովանդակ կը ըլլային :

Երբ որ Վոլոմպոս իր խօսքը վերջացուց , անմիջապէս սկսան զանազան առարկութիւններ ընել իրեն դէմ՝ հաւատոյ վերաբերեալ խնդիրներէն , որոնք ամենեկին յարմարութիւն մը չունէին աս վիճաբանութեանը : Վոլոմպոս երկրաչափական ապացոյցներ կուտար , իսկ հակառակորդները կը պատասխանէին եկեղեցւոյ հայրերուն վկայութիւնները յառաջ բերելով : Էին ժամանակի երկրաչափները կը հաստատ

տէին թէ Հակոտնեաներ կան . Պլինիոս ալ ըսած էր թէ աս բանս խոհական ըննութեան արժանաւոր նիւթ մըն է . բայց Վանկտանտիոս հայրապետը կըսէր թէ անտեղի բան մըն է Հակոտնեաներ կան ըսելը . բանդի անիմանալի էր իրեն թէ ինչպէս մարդիկ զլեւիվայր պիտի գտնեն և թէ ինչպէս ձիւնը և անձրեւը վեր պիտի ելնեն վարիջնալու տեղը . սուրբն () զոստինոս ալ կը հաստատէր թէ Հակոտնեաներուն վարդապետութիւնը հակառակ է հաւատոյ . վասն զի իր կարծիքին նայելով՝ թէ որ Հակոտնեաներ զոնուին , ամէն մարդիկ Ղշխմայ որդիները չեն ըլլար , Ննդոց զբքին ըսածին պէս :

Աս կրօնական վիճմունքները լրմննալէն ետեւ , սկսան քանի մը ուրիշ առարկութիւններ ընել Վոլոմպոսի , որոնք ըստ երեւութիւն գիտութեան վերաբերեալ նիւթեր կը կարծուէին : Դոլովքին գիտունները կընդունէին ուրիշ մէկ կիսագունտ մը ըլլալը . բայց կըսէին թէ հնար չէ հոն երթալ . քանզի նախ և առաջ՝ քոնէ երեք տարի նաւարկութիւն ընել պէտք է . երկրորդ՝ անհնար է որ կարենայ մարդ ոյրեցած զօտիէն անցնիլ : Ուրիշ քանի մը անձինք ալ Վակիկուրոսին վկայութիւնը յառաջ բերելով՝ կընդունէին երկրիս գնտաձև ըլլալը . բայց միայն հիւսիսային կիսագունտին վրայ բնակիչներ կան կըսէին , և թէ երկինքը՝ երկրագունտիս աս մասին վրայ միայն կը տարածուի , և ասկից դուրս մնացածը խառնիխառն բան մըն է : Վերջապէս ոմանք ալ կը միաբանէին Վոլոմպոսի հետ , ըսելով թէ երկրորդ կիսագունտ մը կայ և հնար է հոն երթալը . բայց երկիրը բոլորակ ըլլալով՝ անգամ մը որ հոն իջնալու ըլլաս նէ , կըսէին , երբէք պիտի չկրնաս վեր ելնել մեր հորիզոնին վրայ , որչափ որ օդնութիւն ընեն քեզի հովերը :

Վոլոմպոս կաշխատէր բոլոր աս առարկութիւններուն պատասխան տալու , և իր առանձին զննութիւնները բացատրելու տեղը՝ անոնց խօսքը ջրելով իր անգին ժամանակը կը կորսունցունէր : Աստուածաշունչը՝ կըսէր , նախ ամէն տեղ այլաբանութեամբ կը խօսի , որպէս զի ամենէն սոգէտն ալ իր ըստ

ծր հատկնայ . երկրորդ՝ խոնարհ անածու-
թիւն մը կըցուցնէր . Վախնի հայրերուն
հեղինակութեանը ի բանս հաւատոյ , բայց
մաթէմաթիքական կանոնացր մէջը անոնց
անխալ ըլլալը չէր ընդունէր : Իսկ ա-
նոնց երկրաչափական սպառնալիքները՝ իր
հմտութեամբը և փորձառութեամբը , ա-
ռանց աշխատութեան կըջրէր : Աւստի ա-
նոնց՝ որ կըպնդէին թէ հնար չէ երբեք
այլեցած գոտիէն անցնիլ , կըպատասխա-
նէր , թէ Վա նաւարկէր եւս Կոնստանդնու-
կոյմբըր այլեցած գոտիին տակը , ուր տեղ
բարեբեր տեղումնք դտայ բնակիչներով
լեցուն :

Եւջի բերանը՝ Գոլումպոս երկչոտութիւն
մը ունենալով իր յանդուգն առաջարկու-
թեանէն և ժողովքին օգոստափառ երևոյթէն ,
վախնիվախը և դժուարութեամբ կըխօսէր ,
բայց հետզհետէ սիրտ առնելով՝ հեռացուց
իրմէ աշխարհադրական թղթերը , մէկ դի-
ձգեց գիտնական բնութիւնները , ու իր հա-
կառակորդները իրենց ուղած ասպարէզը
մղելով , ինքն ալ սկսաւ Լստուածա-
շունչէն ընտիր և վսեմ վկայութիւններ բե-
րել , մարգարէական խորհրդաւոր խօսքե-
րէն , որ չափազանց եռանդով մը՝ կըհա-
մարէր միշտ թէ անոնք Լստուածային
ազգեցութիւն մըն են աս անծանօթ աշխար-
հիս՝ ու ան բարեբեր կողմններուն համար ,
որ ինքը կըխոստանար թէ պիտի գտնէ :
Լաքազաս և իր ժամանակակիցները կը
պատմեն , թէ իր խօսքերը ազդու էին , իր
նայուածքը վառվառուն , իր շարժումները
սէգ և վեհափառ , իր բովանդակ ոգին
կարծես թէ իր վրայ կերեւար : Դողովքին
մէջ եղողներուն շատերը շուտով համոզուե-
ցան անոր բնական պերճախօսութեանէն :
Տիկո տը Տէգան , սուրբ Գովինիկոսի կար-
դէն , որ անատենը Լստուածաբանութեան
դաստառ էր սուրբ Ստեփաննոսի վանքին
մէջ , ու ետքը Սիմիլիայի արքեպիսկո-
պոս եղաւ , յայտնապէս Գոլումպոսի կողմը
բռնեց , և իր ընկերներուն առջին ինչ-
պէս որ պէտք էր նէ անոր փատր և ի-
րաւունքը պաշտպանեց : Բայց անոնց
մտքերը նախապաշարմունքով լցուած էին ,
և ժողովքին գահերէցը ևս Ֆերտինանտոս
Պալապիւրային , որ ըստ օրէ յամառութեամբ

Գոլումպոսի բերած պատճառներուն դէմ կը
կենար . ասկէց դատ՝ բոլորովին զբաղած
ըլլալով հասարակաց գործքերուն , բնաւ
հոգ չէր տանէր գիտնականներուն ժողով-
քին : Լս միջոցիս Ստանիյ Թագաւորը
Գոլումպոս երթալով , 1487ին գարնան մէջ ,
գիտնականներուն ժողովքը վերջացաւ . և
Թագաւորին տրուած իրենց պատասխանը
այնքան նպաստամատոյց չըլլալով՝ անոր
յոժարութիւնը պաղեցուց : Ետքը Սուրի-
տանացուց սրտերազմը վրայ եկաւ ու Գո-
լումպոս բոլորովին մոռցուեցաւ :

Հոս դրուած պատկերը կըներկայացունէ
մեզի Քրիստափոր Գոլումպոս իր վիճաբա-
նութեան մէջ . անիկայ իր մէկ ձեռքը գրքի
մը վրայ դրած , և մէկալը երկրագունդին
վրայ , սպառնալիքներ յառաջ կըբերէ կը
հաստատէ իր գիւտը , և անոնց ըսածները
կըջրէ . իր բոլորոթիքը շարուած են դատաւոր-
ները՝ որոնք հազիւ թէ մտիկ կընեն իր
խօսքը , մանաւանդ թէ ափսոսալով զնքը՝
բաժնիծող կըլլան և գլուխին կերպցունեն .
անոնց մէկն ալ իր ձեռքը ճակատը դրած՝
բովը եղողին կիսապունէ , որ խեղճ ատե-
նաբանը ճաթած ըղեղ մարդ մըն է :

Ճշմարտութեան արժողութիւնը :

Սրբէ անոնք բու ճշմարտութիւնով , որ բու խօսքը ճշմար-
տութիւն է : Յովհ . Ժէ . 17 :

Պատմութիւնը կըսորվեցունէ մեզի որ
բարոյական բարիքը միշտ ճշմարտութեան
պտուղը եղած է , և բարոյական չարիքն
ալ մոլորութեան պտուղը : Այլ էր որ
նախ յոժարեցոյց մեր Լգամ նախահայրը ,
որ Լստուծոյ հրամանին հնազանդի . Ճշմար-
տութիւնը : Քանզի գիտէր թէ ան նոյն
օրը որ բարեւոյ ու չարի գիտութեան ծաւին
պտուղէն որ ուտէր , ալ պիտի դադրէր
կենաց ծաւին պտուղը ուտելէն ու մեռնելու
ենթակայ պիտի ըլլար : Այլ զրդեց ետքը
զնոյն ինքն Լգամ , որ ան արգելքը չստացէ .
Սոլորութիւնը : Արովհետեւ անանկ համո-
զուեցաւ օձէն որ ան ծաւին պտուղը կերած
օրը պիտի չմեռնի , հապա աշուրները պիտի
բացուին ու Լստուծոյ նման պիտի ըլլայ . . .
— Այլ էր որ Սովոսէսի և Խարոյէրացիներուն
քաջաւերութիւն տուաւ աներկիւղ ծովէն

անցնելու, և հնազանդելու Մատուցոյ աս
հրամանին, իսկ խորհրդէն որոշուող որ առաջ
էր լինող հրամանք : Նշմարտութիւնը : Վանգի գի-
տէին որ ջուրերը Մատուածային կարողու-
թեամբը դիզուած իրենց ճամբայ բանալու
համար, աջ կողմը և ձախ կողմը պարսպի
պէս պիտի կենային, և իրենց անցնելէն ետքը
վերստին պիտի միանային անոնք : Ո՛վ դրդեց
դժարաւոր և իր բանակը որ խարայէլացոց ե-
տին իյնայ ինչո՞ւն ծովուն մէջ, Մատուծոյ
բայցայայտ հրամանին դէմ որ ըսաւ, իմա որ
որ էր լինող ժողովուրդը : Սոյնը թիւնը : Չէ-
ին գիտեր որ միայն Մատուծոյ ժողովուրդին
համար պատուաւոր և դիզուած ջուրերը
կրտսեանին որ ամենէն ետքը եղող խարայէ-
լացին ալ անցնի, որ իրենց տեղը դառնան
և զանոնք հալածողները կըլլեն : Ո՛վ շար-
ժեց Յիսուս Վրիտտի առաքեալները, որ
բոլոր Լըուսաղէմացոց առջեւ այնպիսի
աներկիւղ վկայութիւն տուին անոր, և շա-
տերն ալ իրենց արիւնովը կնքեցին զանկալ-
յա Նշմարտութիւնը : Եւ անոնք որ ճանցե-
րէն որ Յիսուս էր Վրիտտու Ուրբին Մատուծոյ ին-
քանոց : Եւ ինչո՞ւն լինէր ինչ որ Կիւսիւր լինէր է-
ր : Ո՛վ դրդեց Հրեաները և անոնց
իշխանները որ Դաւիթ Տէրը խառն հանէն .
Սոյնը թիւնը : Վանգի չէին տեսներ անոր
փառքը . չէին կրնար իմանալ թէ խոնարհ
որդին Սարիամու ան Սեփան է՝ որուն կրտ-
սեանին թէ իրենց ազգին վրայ պիտի թա-
գաւորէ . չէին հասկնար որ անոր թագաւո-
րութիւնը աս աշխարհէս չէր . չէին գիտէր
իրենց բաժնը երբոր զանկալ խառն հանե-
ցին, ոչ ալ իրենց ըսածը՝ երբ որ կաղաղա-
կէին, լեռն անոր արեւը մէջ զայն մէջ որոնց
զայ բայ : Ո՛վ է ան որ գործատնեայն
կըշարժէ զՄատուած սիրելու և անոր ծա-
ւայութեանը իր անձը նուիրելու : Նշմար-
տութիւնը . որովհետեւ գիտէ թէ նախ Մատ-
ուած սիրեց զինքը, ու իր Որդին տուաւ ի-
րեն համար . և թէ հանդերձեալ աշխար-
հին երջանկութիւնը, և աս աշխարհէս մէջ
խաղաղութիւն վայելելը՝ անոնց համար է
միայն որ իրենց կամքը կատարելէն կըհրա-
ժարին : Ո՛վ է ան որ կըդրդէ աշխարհա-
սէր մարդը որ անհոգութեան ու մեղաց մէջ
մնայ . Սոյնը թիւնը : Որովհետեւ չհաւա-
տար որ Մատուած զինքը սիրէր է . չհաւա-
տար որ Մատուած իր Որդին տուաւ իրեն
համար . կարծէ թէ անգոյն Տէր մըն է Մա-
տուած, և թէ դժուարակիր է անոր լուծը :
Եւ ի՞նչ ըսեմ ես . ահա կրտսեանմբ որ
սրբութիւնը ամէն տեղ իբրեւ որդի ճշմար-
տութեան՝ յայտ յոնգիման կերակայ, ու

մեղքը ամէն տեղ իբրեւ որդի մոլորութեան :
Եւ ամէն բարի գործք ճշմարիտ սկզբունքի մը
գործածութիւնն է, և ամէն բարի վարք՝
ճշմարիտ վարդապետութեան գործածու-
թիւնը . ասոր ներհակ՝ ամէն չար գործք
սխալ սկզբունքի մը գործածութիւնն է, և
ամէն չար վարք՝ սուտ վարդապետութեան
գործածութիւնը :

Ուստի՝ թէ որ գիտէք սրբութեան արժու-
ղութիւնը, խոստովանեցէք նաեւ ճշմարտու-
թեան արժողութիւնը : Վասն զի ինտոր
որ փրկութիւնը անհնարին է առանց սրբու-
թեան, անանկ ալ սրբութիւնը անհնա-
րին է առանց ճշմարտութեան : Վասնորոյ
սկսէ՝ ուշադրութեամբ բնեւ դիզ թէ
ճշմարտութեան մէջն էս արդեօք, կամ թէ
մինչև հիմա ան բազմաթիւ քրիստոնեանե-
րուն նմանեցար՝ որոնք անունով միայն քրիս-
տոնեայն են, և իրենց քրիստոնէութիւնը՝ ու-
րիշ բան չէ, այլ քրիստոնէական եկեղեցիի
մը մէջ ծնանելը, քրիստոնէական եկեղեցիի
մը մէջ մկրտուելը, քրիստոնէական եկեղե-
ցիի մը մէջ հաղորդուելը, ու քրիստոնէական
եկեղեցիի մը մէջ կատարուած աստուածային
պաշտաման ներկայ ըլլալը, անանկ որ ատ
քրիստոնէութիւնը կըմերաբերի քու ծնո-
ղացդ, քու հոգեւոր հովիւներուդ, քու եկե-
ղեցիիդ պատերուն, քիչ մը ջուրի, քիչ մը
հացի, քիչ մը գինիի, ու բեզմէ զատ ամէն բա-
նի, բայց քեզի չմերաբերիր : Եւ ասան-
որոշ քրիստոնէութիւնը հաստատ սկզբունք
մը չունի, և չգիտեր որ ինչ ինչ ինչ լինայ :
Թէ որ քու քրիստոնէութիւնդ ալ այսպէս
է նէ, ո՛հ, անկալ չէ ճշմարտութիւնը՝
բանգի ճշմարտութիւնը միշտ յայտնի կնիք
ունի . անկալ երբեք հոգիի մը մէջ
չմտնէր առանց ըսելու անոր, ԵՍ ԵՍ . ԵՍ
ՄԵՐՄԵՐՍՈՒԹԻՒՆՆԵՐ, ԵՍ՝ ՍԻ՝ պատասխա-
ներ ինձի ըսելով՝ Թէ ի՞նչ ընեմ, եթէ մո-
լորուած եմ նէ՝ իմ մոլորութիւնս անկեղծ է .
ինչու որ անկեղծութիւնը բաւական չէ,
ճշմարտութիւն պէտք է : Պէտք է ուրեմն
փնտռել, պէտք է աշխատել, պէտք է
կարդալ, աղաչել, ամէն զանազան բաղնիւ
և ամէն կերպիւ քննել հարցուփորձ ընել
թէ ի՞նչ է ճշմարտութիւնը :

Մոլորութիւնը ժանգի կընմանի . անկալ ա-
ւելել շուտով կըհինցունէ քան որչափ աշխատան-
քը :

Պատուը գեղեցիկ ծաղիկի մը հետեանքն է
ինչպէս որ պատիւը աղէկ կեանքի մը :

Կառքին ամենէն գեշ անիւն է որ միշտ ձայն
կըհանէ :

Կեբէսի պատկերը :

Կեբէս էր՝ Սոկրատ փիլիսոփային աշակերտ-
ներէն մէկը՝ որ Պլատոնի պինտ գեղե-
ցիկ տրամախօսութեանը մէջ ալ իր ա-
նունը կը յիշատակուի իբրեւ մէկը՝ մէկզմէկու
հետ խօսող անձանց , որ հաւատարիմ ըլ-
լալով իր վարժապետին բարոյական վար-
դապետութիւններուն , կամեցաւ տարածել
զանոնք իր առաքինութեանցը օրինակովը ,
ու իր զրուածներովը : Կրտսէն թէ Կեբէս ի-
րեք տրամախօսութիւն շարադրեց . բայց
մէկը միայն հասաւ միջի աս անունով ,
«Պատկեր Կեբէսի» . որն որ հասարակօրէն
Լալիկտոտոսի տեսարակին հետ կը տուուի :
Լալիկայ մարդկային կենաց պլաքանական
նկարագրութիւնն է : Կեբէս կրենթադրէ
որ քանի մը օտարական անձինք , Սատուր-
նոսի տաճարին ոյցելութեան եկած , գաւի-
թը կեցեր են պատկերի մը առջեւ որ բազ-
մաթիւ անձինք կը ներկայացունէ , որոնք
աստին անդին կը պլտըտին երեք ընդ-
արձակ շրջապատ տեղերու մէջ : ()
տարականները ուզելով իմանալ աս խոր
հրրգաւոր պատկերին նշանակութիւնը , ծե-
րունի մը՝ տաճարին պաշտօնեաներէն , ա-
նոնց կըմօտիկնայ ու կըմեկնէ նոյն պատկե-
րը :

Հետագայ տրամախօսութիւնը՝ քաղուած
մըն է ծերունիին ըսածներուն և իր տուած
պատասխաններուն՝ օտարականաց ըրած
հարցմունքին : Բայց պատկերը Վաղդիա-
ցի վարպետի մը շինածն է , որ ծերունիին
խօսքերուն նայելով նկարագրեր է պատկե-
րը , որպէս զի պատմութիւնը աղէկ բացա-
տրուի : Հիրաւի աս պատմութիւնս գեղե-
ցիկ՝ նկարագրութիւն մըն է , բայց կը
խնդրեմք կարդացողէն որ միշտ յիշէ թէ ա-
սիկայ հեթանոս հեղինակի մը գործն է և
չգարմանայ ասոր քրիստոնէական գաղա-
փարներէն ստորին ըլլալուն համար :

... Պարտիք գիտնալ , ըստ ծե-
րունին օտարականներուն , վեր տունելով
իր գաւազանը ու պատկերին վրայ երկնցնե-
լով , պարտիք գիտնալ որ աս պատկերը՝
որն որ կը տեսնէք , Կեանք կը կոչուի , ու աս
բազմաթիւ ամբօխը որ զրանը առջին կե-
ցեր է , անոնք են որ ներս պիտի մտնեն :
Ի՞նչ ծերունին որ մէկ ձեռքը թուղթ մը ու-

նի և մէկալովը կարծես թէ բան մը կը ցու-
ցնէ , կը կոչուի Ոգի : Լալիկայ խրատ կու-
տայ ներս մտնողներուն թէ ինչ ընթացք
պիտի ունենան կենաց մէջ մտնելէն ետեւ ,
կըխրատէ նաեւ թէ ինչ ճամբայ պիտի
բռնեն հոն թէ որ կուզեն որ չկորսուին :

() Խաբախ . Ի՞նչ ճամբայ բռնելու կը պատ-
ուիրէ անոնց :

() Երաւի . Կը տեսնեն որ բազմութեանը մը
տած զրանը բով աթու մը կայ , որուն վը-
րայ կնիկ մը նստեր է երեսը շարաւած , հա-
մոզիչ տեսք մը ունի ան ու ձեռքն ալ բա-
ժակ մը բռներ է :

() Լալիկայ կը տեսնեն . բայց աս կնկանը
անունը ի՞նչ է :

() Լալիկայ Խաբէութիւն կը կոչուի ,
որ կըմօտընցունէ բոլոր մարդիկը , ու իր
ղիւթական խմելքովը կը գինովցունէ կե-
նաց մէջ մտնողները :

() Ի՞նչ խմելք է ատիկայ :

() Սոլորութիւն և Տգիտութիւն . աս
կէ խմելէն ետեւ շրջապատէն ներս կըմտ-
նեն :

() Լալիկայ ալ կը խմեն աս մոլորու-
թեան խմելքէն :

() Լալիկայ ամէնքն ալ , բայց ոմանք
աւելի շատ , ոմանք աւելի քիչ : Կը տեսնեն
նաեւ զրանը մէջը ան բազմութիւնը կնիկ-
ներուն , որոնք թէ և մէկզմէկէ տարբեր ,
հոմանիքներու կը նմանին :

() Լալիկայ , կը տեսնեն զանոնք :

() Լալիկայ կը կոչուին , Լախապաշար-
մունք , Բաղձանք , Կիրք : Բազմութիւնը
ներս մտնելու ատեն , ասոնք ամէն մէկ
անցնողին վրայ կը նետուին կը փաթտուին
անոնց ու առաջ կը տանին :

() Ո՞ւր կը տանին զանոնք :

() Ոմանք յառողջութեան , ուրիշները
ի կորուստ , ըստ որում գինովցած են Խա-
բէութեան խմելքէն :

() Ո՞վ աստուածներ , ի՞նչ աղէտալի
հեղուկ է աս :

() Լալիկայ կը տեսնեն ամէն մէկը կը խոս-
տանայ անոնց թէ կը տանի զիրենք ամէն բա-
րիքներու աղբիւրը , ու պիտի հասցունէ բա-
րի բաղդին և երջանկութեանը : Ի՞նչ խղճա-
լիները՝ Խաբէութեան բաժակէն մոլորու-
թիւն ու տգիտութիւն խմած ըլլալով , չեն

կրնար գտնել կենաց ճշմարիտ ճանապարհները : այլ կըթափառին ըստ զիպաց . կըտեսնեն նաև թէ ինչպէս առջի ներս մտնողները իրենց անկանոն ընթացքը կը յարմարցունեն ատ կնիկներուն հաճոյիցը :

() . Այս կըտեսնեմ . բայց ով է աս մէկալ կնիկը , որ կոյր կըթուի , ու խեղացընոր , և քարեղէն գունտի մը վրայ կայներ է :

Օ . Բսիկայ Բաղդ կըկոչուի . և ոչ մի այն կոյր է , այլ նաև խուլ և անմիտ :

() . Ի՞նչ պաշտօն ունի ատ կնիկը :

Օ . Երթալ պտրտիլ ամէն կողմ , կողոպտել ունեցածները և անոնցմով ուրիշները հարստացունել , քիչ մը ատենէն ետև ասոնցմէ ալ իր տուած պարգևները ետ առնել ու այլոց տալ , նմանապէս առանց ընտրութեան և հաստատութեան : Ուստի իր հետը ունեցած նշանակը՝ շատ աղէկ կիմացընէ իր բնութիւնը :

() . Ո՞րն է աս նշանակը :

Օ . Ան գունտը որու վրայ ինքը կայներ է :

() . Ուրեմն , ի՞նչ կընշանակէ ասիկայ :

Օ . Կընշանակէ թէ իր պարգևները ո՛չ հաստատուն են և ո՛չ ապահով , վասն զի երբ որ մէկը Բաղդին կըվստահի , մեծ է իր կործանումը ու շատ վտանգաւոր :

() . Բայց ի՞նչ կըխնդրէ ան անթիւ բազմութիւնը , որ անոր չորս զին աւեր է , և ի՞նչ կըկոչուին ասոնք :

Օ . Աս մարդիկը Բնիստհեմ կըսուին . ամէն մէկը կըխնդրէ անկէ ան բարեքներէն որն որ կոյրգիւրայն կըսուի :

() . Ուստի ինչո՞ւ համար ամէնուն դէմքը մէկգմէկու չնմանիր . ինչո՞ւ ունեք մեծ ուրախութեան մէջ են , երբոր ուրիշները ձեռուրնին երկնցուցեր են յետին յուսահատութեան մէջ :

Օ . Ուրախ դէմք ունեցողները անոնք են որ բարիք մը առած են անկէ , ու Բարի Բաղդ կանուանեն զանիկայ : Իսկ մէկայնէրբ որ արցունք կըթափեն ու ձեռքերնին երկնցունելով կաղաչեն , անոնք են որոնցմէ իր առջի տուած բարիքները ետ առած է . ասոնք ալ Վեշ Բաղդ կանուանեն զանիկայ :

() . Ի՞նչ տեսակ բաներ են ուրեմն իր պարգևները , որ ընդունողներուն այնքան ուրախութիւն կըպատճառեն , ու կորսընցունողներուն այնքան արցունք թափել կուտան :

Օ . Ան ամէն բաներն են որ մարդիկ հասարակօրէն բարիք կըսեպեն զանոնք :

() . Որո՞նք են աս բարիքը :

Օ . Հարստութիւնք , փառք , ազնուութիւն , զստակներ , իշխանութիւն , արքայական թագ և ուրիշ ասոնց նման ստացուածքներ :

() . Աս բաները միթէ բարիք անուանելու արժանաւոր չե՞ն մի :

Օ . Ատիկայ անանկ մէկ խնդիր մըն է որ ուրիշ ատեն կընտաք խօսակցիլ ատոր վրայով : Բաւ այժմ միտ զնեք այլաբանութիւնը բացատրելու :

() . Հատ աղէկ :

Օ . Աս զոնէն անցնելէն ետև , կըտեսնեն ուրիշ շրջապատ մը , ու գուրան ալքանի մը զարդարուած կնիկներ :

() . Այո :

Օ . Ասոնց մէկը Բնբարեխաւնութիւն կըկոչուի . միւսը՝ Հեշտութիւն , իսկ միւս երկուքը՝ Բգահութիւն և Սարգահածութիւն :

() . Ինչո՞ւ հոս կեցեր են ասոնք :

Օ . Կըզիտեն զանոնք որ Բաղդէն բան մը կընդունին :

() . Ետքը ի՞նչ կընեն :

Օ . Անտոնք մեծ ուրախութեամբ կը փաթտուին անոնց , կըստիպեն որ իրենց հետ բնակին . կըխոստանան անոնց քաղցր կեանք մը , ազատ ներդութենէ ու տրամուլութենէ : Թէ որ մէկը աս կախարդներէն խաբուած , զուարճութիւն խնդրելու ըլլայ՝ իր կեանքը նախ շատ ախորժելի կըթուի իրեն , բայց աս զուարճութիւնները առ երևոյթ բաներ են : Բոր հակառակ , ինչ ատեն իր զինովութենէն կըզատուանայ , կը տեսնէ որ ինքը անանկ կարծեր է թէ կուտէ կըլսմէ , բայց իր ինքը և իր անձը որս եղած է յափշտակութեանց և նախատանայ : Բայց , Բաղդէն առածները բոլորն ալ մխիթելէն ետև , կըստիպուի զերիի պէս աս կնիկներուն հնազանդելու , ամէն բան քաշել ու անարգ ընթացք մը ունենալ , ու ա-



ԿԵԼԵՆ ԿԱՐԴԵՐՆ ։

- | | | | | | |
|-----------------------|----------------|---------------|----------------------|---------------------|-------------------|
| 1. Ելնարճ մտնողները ։ | 13. Սուգ ։ | 14. Հուսա- | 25, 26, 27. Սաթեհմա- | և Իրբորդ շրջապատ ։ | սակում Զամբորդ ։ |
| 2. Սգի ։ | 3. Խաբէուի ։ | Հատուի ։ | 15. Գաւիթ ։ | 36. Չախաւորութիւն ։ | 47. Երաքնուիներ ։ |
| 4. Եւթի շրջապատին | 16. Թշուաուի ։ | 17. Եւթի | 18. Վարծիք | 37. Համբերուի ։ | 38. Եւթի |
| գուռը ։ | 5. Եւթապա- | շարմուռը ։ | Բաղճանը ։ | 39. Հմուտի ։ | 40. Հա- |
| Վերք ։ | 6. Բաղճ ։ | Հմուտի ։ | և շրջապա- | մոգումն ։ | 41. Դժբութի ։ |
| 7, 8. Եւթաքնեխանուի, | Հեշուուի, | Եւթաշուի, | 21, 22, 23. Բանա- | 42. Սարբում Զամբոր- | 43, 44. Հմուտի |
| ՍարգաՀաճոյութիւն ։ | Ստեղծք, | Եւթաքանը, | 31. Եւթաքնաւանուի ։ | 32. Եւթապաշարմուռը, | 33. Եւթաքնի, |
| 9. Հանցնք ։ | 10. Վերք ։ | Տրամբանք ։ | 34. Եւթաքնի, | 35. Դժբութի | 36. Եւթաքնի |
| 11. Տրամուի ։ | 12. Հաւ ։ | 24. Եւթաքնը ։ | 37. Եւթաքնի | 38. Եւթաքնի | 39. Եւթաքնի |

նոնց հաճելի ըլլալու համար ինքզինքը չափէ դուրս անկարգութիւններու տալ . օրի նստի աղագաւ՝ նենդաւոր կըլլայ, սրբապիղծ, ստերգումն, մատնիչ, աւագակ, ու ամէն կերպ մոլութիւնները ունեցող: Վ երջապէս ամէն տեսակ հանցանք ընելէն ետեւ, Վ իշտին ձեռքը կըմամոնուի:

() . Ո՞վ է ասիկայ:

Օ . Կըտեսնե՞ս սա տեսակ մարդիկնէրուն ետեւը, պատուհան մը և նեղ ու խաւար բանտ մը: Ըն կնիկը՝ որուն ձեռքը խարաղան մը կայ, Պատիժ կըկոչուի . ան որ գլուխը իր ծունկերուն վրայ ծուր է, Տրտմութիւն կանուանի . իսկ միւս կնիկը որ գլխուն մազերը կըփեթտէ, հաւ կըսուի:

() . Ո՞վ են սա երկու անձինքը որ անոնց քովը կըտեսնեմք, մերկ, ահաւելի, տգեղ ու չափէ դուրս նիհար կերպարանքով:

Օ . Լսոնց մէկը Սուգ կըսուի, և իր եղբայրը՝ Յուսահատուի: Լհա սա դահիճ ներուն ձեռքը կըմամոնուի խեղճը, որ անոնց քովը ապրի շարունակ տանջանքի մէջ: Լտքը ուրիշ բանտի մը մէջ կընետեն զանիկայ, որ թշուառութիւն կըսուի, ուր տեղ իր քնացորդ կեանքը կանցնէ ամէն տեսակ չարիքներու մէջ, և անատենը միայն կաղատի՝ թէ որ բարեբաղդութիւն ունենայ. Օ ղջման հանդիպելու:

() . Լնատենը ի՞նչ կըպատահի անոր:

Օ . Թի որ Օ ղջումը անոր հանդիպելու ըլլայ, անիկայ կաղատէ սա թշուառ կանը իր անգութ գերութեանէն, ու նոր բաղձանք աղղկով անոր, և նոր կարծիք ներ, երկու ճանապարհի ընտրութիւնը կուտայ անոր, որոնց մէկը՝ Ղշմարիտ շրմտութեան կըտանի, իսկ միւսը՝ Սուտ շրմտութեան: Թի որ լաւը ընտրելու ըլլայ, իր ճամբորդութիւնը լըմնցունելուն՝ կըմաքրուի, կաղատի ան վտանգներէն որ կըսպառնային իրեն, ու իր քնացորդ կեանքը կանցնէ երջանկութեան գերկը, ամէն զրժբաղդութեան ազատ . եթէ ոչ՝ Սուտ շրմտութիւնը մոլորութեան ճամբան կըձգէ զանիկայ:

() . Մե՞ծք Լքամաղդ, ի՞նչ զարհուրելի վտանգ է ասիկայ: Հապա սուտ շրմտութիւնը ո՞ւր է:

Օ . Կըտեսնե՞ս սա միւս շրջապատը, որ գաւիթը մոնելու տեղը կնիկ մը կայնէր է ընտիր զարդերով ու մաքրութեամբ զարդարուած . բաղմութիւնը ու թեթեւամիտ մարդիկ շրմտութիւն կանուանեն զանիկայ, բայց ասիկայ անուն մըն է, որուն բնաւ արժանաւորութիւն չունի: Ըմէն անոնք որ պիտի պահպանուին, կըպարտաւորին հոն կէց անցնիլ, Ղշմարիտ հրմտութեան բընակարանը համեմէն առաջ:

() . Մի՞թէ ուրիշ ճանապարհ չկայ հոն համեմելու:

Օ . Լսո՞, կան ուրիշ ճանապարհներ:

() . Ո՞վ են անոնք որ կըձեմեն շրջապատին ներսի կողմը:

Օ . Լնոնք են Սուտ շրմտութիւնը պաշտօնները, որ անկէ մոլորուած, կըկարծեն թէ Ղշմարիտ շրմտութեան հետ կապին:

() . Ի՞նչ կըսուին ասոնք:

Օ . Բանաստեղծք, Լտնաբանք, Տըրամաբանք, Լքածիշտք, Թուաբանք, Լըրկըափք, Լստղաբաշք, Լպիկուրեան փիլիսոփայք, Ղեմական փիլիսոփայք Բանադատք և ուրիշ ասոնց պէս մարդիկ:

() . Լն կնիկները ո՞վ են որ մէկ կողմէն մէկալը կըվաղեն ու աւջիններուն կընմանին, որոնց հետն էին Լնբարեխառնութիւնը և իր ընկերները:

Օ . Լհա Լնբարեխառնութիւնն է իր ընկերներովը:

() . Ի՞նչպէս . անո՞նք ալ սա շրջապատին մէջ կըմոնեն:

Օ . Լսո՞ . բայց աւելի աւջի շրջապատին մէջ կըգտնուին քան թէ հոս:

() . Մի՞թէ Լախապաշարմունքներն ալ երբեմն կըմոնեն սա տեղ:

Օ . Լնշուշտ . Տգիտութիւնը ու Յիմարութիւնը ևս սա խումբին հետն են: Ընոնք որ ես քեզի յիշեցի, դեռ կըզգան աղետալի խմելքին զօրութիւնը՝ որ Լաբեութիւնը խմցուց անոնց: Չեն կրնար ազատիլ նախապաշարմունքին լուծէն և ուրիշ մոլութիւններէն մինչև որ թող չտան իրենց սուտ աստուածուհին, Ղշմարիտ ճամբուն մէջ չմոնեն . մինչև որ չիմեն առողջարար ըմպելք մը որ կարող ըլլայ մաքրել զերենք . մինչև որ չհեռացունեն նախապաշարմունքը և տգիտութիւնը և բոլոր մոլութիւնները:

Թիւնները որ պաշարած են զանոնք : Ըն ա տենը միայն իրենց աղաւտութիւնը ապահով է : Բայց քանի որ Սուտ Հմուտութեան հետ կը բնակին՝ իրենց գերութիւնը պիտի տւէ միշտ : ու իրենց ծանօթութիւններն ալ հա զարումէկ չարեաց աղբիւր մըն է իրենց հա մար :

() . Որն է ուրեմն ճամբան որ Ղշմարիտ Հմուտութեանը կը տանի :

Օ . Կը տեսնեն սա բարձր տեղը որ ան բնակ , անապատ կը թուի . նեղ դուռը և դրանը առջին ալ առանձին ճամբայ մը որ առապար , խորտուբորտ ու դժուարակոխ կերենայ : Հոն մէկ բարձր տեղ մը կայ դժուարամատոյց , ու ամէն կողմէն ալ սոս կալի անդունդներով . ահա ան է Ղշմարիտ Հմուտութեան ճամբան :

() . Յիրաւի երեւոյթէն միայն շատ դժ ուարին կը թուի :

Օ . Նոյն տեղին մօտ բարձր ապառաժ մը կայ , սեպացեալ ամէն կողմէն , ուսկէ երկու ուժեղ կնիկ ձեռքերնին կերկրնցու նեն մեծ փութով :

() . Ըստ կը տեսնեմ , անոնց անունը ի՞նչ է :

Օ . Մէկը Չափաւորութիւն կը կոչուի , և միւսը՝ Համբերութիւն , ասոնք եր կու քոյր են :

() . Ինչո՞ւ համար ասանկ փոյթ մը ցու ցրենք ձեռքերնին կերկրնցունեն :

Օ . Մինչև հոն հասնող ճամբորդները յորդորելու համար որ բաջալերութիւն ու նենան չթողուն զերեք անարդ յուսահա տութեան մէջ իյնելու : Կըսեն նաև , թէ քիչ մը ջանք ընելէն ետքը բերկրալի ճամբայ մը պիտի գտնեն :

() . Բայց երբ որ ժայռին ստորոտը հասնելու ըլլան , ի՞նչպէս կընան վեր ելելու , վասն զի շաւիղ մը չէմ տեսներ որ լեռանը գլուխը հասցունէ :

Օ . Ըստ երկու օրիորդները վար կիջնան ու կը տանին զանոնք . ետքը կըսեն անոնց որ հանգստանան . ու քիչ մը առենէն ետև , իւժ և վստահութիւն կուտան անոնց , խոտանալով Ղշմարիտ Հմուտութեանը տանելու զերեք . կը ցուցնեն թէ որչափ գեղեցիկ է ճամբան , հարթ , առանց արդէքի և վը տանդներու : Կը տեսնեն նաև անտառին առ

ջելը սխրալի մարդադետին մը , պարզ և ճառագայթաւետ արեգակէ մը լուսաւորեալ . նմանապէս մարդադետնին մէջ տեղը ուրիշ ջրջապատ մը և ուրիշ դուռ մը :

() . Ըստ . ան տեղին անունը ի՞նչ է :
Օ . Բնակարան Երանելաց . վասն զի բոլոր Եռաքինութիւնները և Երջանկու թիւնը հոն կը բնակին :

() . Ի՞նչ նախանձելի բնակարան է ա նիկայ :

Օ . Դրանը բով գեղեցիկ կին մը կը տեսնես որ շատ պարկեշտ համարձակու թիւն մը կը ցուցնէ , տարիքն ալ կատա րելութեան հասակին վախճանը մօտիկ ցած , պարզ լաթեր հագած և առանց շին ծու զարդերու : Ընիկայ նստեր է , ոչ թէ գունտի մը վրայ , այլ քառակուսի և ան շարժ վիմի վրայ . իր քովը երկու ուրիշ կնիկներ կան որ իրեն աղջիկները կը թուին : Ըստ աստուածուհին է Հմուտութիւ նը , և իր երկու ընկերներն են , Համոզումն և Ղշմարտութիւնը :

() . Ինչո՞ւ համար քառակուսի քարի վը րայ նստեր է :

Օ . Ղամբորդներուն ցուցնելու հա մար որ իրեն հասցընող ճամբան ապահով ու հաստատուն է , ու իր պարզեաներուն ժառանգութիւնը ստոյգ է :

() . Որն են աս պարզեաները :

Օ . Վստահութիւնը և անփոփոխ ա պահովութիւնը :

() . Ի՞նչ է ասոնց օգուտը :

Օ . Մտերիմ և հիմնաւոր համոզումն թէ ալ ցաւ մը պիտի չկրէ ճամբորդը :

() . Ո՞վ աստուածք , ի՞նչ հոյակապ պարզեաներ են ասոնք . բայց ինչո՞ւ համար ջրջապատէն դուրս կեցեր է :

Օ . Իր հիւրերը բժշկելու ու առողջ արար ըմպելիք մը խմցունելու անոնց : Երբ որ ճամբորդ մը մինչև Հմուտութեանը կը հասնի , կը բժշկէ զանիկայ և կուտայ անոր ան հեղուկ որ իր հետը բերած բոլոր մո լորութիւններէն կը մաքրէ զանիկայ :

() . Որո՞նք են աս մալորութիւնները :

Օ . Տգիտութիւնը և Սոլորութիւնը որ խմած է Երանելութեան բաժակէն , նաև գուռողութիւն , ընչաքաղցութիւն , անբա րեխաւնութիւն , ագահութիւն և ամէն ու

րիշ մոլութիւնները որոնց ինքզինքը տուած էր առաջին շրջապատին մէջ :

() . Մաքրութենէն ետեւ ո՛ւր կըխրկեն զանիկայ :

Մ . Գիտութեան և ուրիշ առաքինութեանց բնակարանը կըմոյցունեն : Կըտեսնե՞ս սա գեղեցիկ , պարկեշտ , ու առանց արհեստի զարդարուած կնիկները , որ զըլանը մէջ կեցեր են : Բռաջինը Գիտութիւն կանուանի , միւսները որ իր քուրերն են , օգրութիւն , Բրդարութիւն , Բմբըծութիւն , Չափաւորութիւն , Բզատութիւն , Եռթկալութիւն և Հեզութիւն կը կոչուին :

() . Ո՛րչափ գեղեցիկ են ասոնք . ի՞նչ փառաւոր յոյս ունիմք մենք :

Մ . Այո՛ , թէ որ կըհասկնաք ու գործով կըկատարէք լաւմիտ :

() . Ստոյգ գիտցիր որ մենք սրտանց պիտի աշխատինք սա բանիս համար :

Մ . Ձեր երջանկութիւնը ասկէ կախում ունի :

() . Առաքինութիւնները ճամբորդը ձեռք ձգելէն ետեւ ո՛ւր կըտանին զանիկայ :

Մ . Երջանկութեան , իրենց մօրը : Կը տեսնե՞ք սա ճամբան որ բոլոր շրջապատներուն վրայ նայող բարձր տեղ մը կըտանի : Գաւիթը մոտենալու դրանք մէջ չափահաս կին մը կայ , սրտաշարժ գեղեցկութեամբ , առանց պերճութեան , ու զարդարուած պարկեշտութեամբ որ բարձր աթոռի մը վըրայ նստեր է , ծաղկեայ պսակ մը ունենալով գլուխը : Բսիկայ է որ Երջանկութիւն կըկոչուի :

() . Ի՞նչ կընէ ասիկայ իր աթոռը հասնողին :

Մ . Ինքը ու բոլոր իր ընկերները՝ իրենց պարզեցնելով կըպսակեն զանիկայ , ինչ պէս մէկ քաջ ըմբիշ՝ մը յաղթական ելած խիստ մեծ պատերազմներէ :

() . Ի՞նչ թշնամիներու յաղթեր է արդեօք անիկայ :

Մ . Բնական վտանգաւորները . այսինքն անգութ ճիւղաղները որ զինքը կուտէին , կըտանջէին ու սոսկալի գերութեան մէջ արցունք թափել կուտային անոր . ահա

այն թշնամիները որոնց որ ինքը յաղթեր նկուն ըրեր է : Իր ազատութիւնը զտեր է ան . ու հիմայ սա ճիւղաղները , որ քիչ մը առաջ իր բռնաւորներն էին , գերի եղած են իրեն :

() . Ո՛ր ճիւղաղներուն համար կըխօսիս դուն . շատ կուզեմ որ ես ճանչնամ զանոնք :

Մ . Նախ՝ Տգիտութիւնը ու Մոլութիւնը . դուն ասոնք ճիւղաղ չե՞ս մի սեպի :

() . Այո՛ , անգութ ճիւղաղներ են :

Մ . Յետոյ Յաւը , Սուզը , Բզահութիւնը , Բնբարեխառնութիւնը և բոլոր մոլութիւնները : Հիմայ անոնց տիրաբար կըհրամայէ ու ալ անոնց գերի չէ :

() . Ո՛վ մեծ քաջութեանս . ո՛վ գեղեցիկ յաղթութեանս : Բայց ըսէ՛ ինձի , ի՞նչ զբոլութիւն ունի ան պսակը որով յաղթողը պսակուեր է :

Մ . Բարեբաղդութիւնը կըհաստատէ . վասն զի ան որ սա սլակը կըկրէ՝ զուտ և հաստատուն երջանկութիւն մը կըվայելէ , ու սա ալ ուրիշներէն կախում չունի , այլ ինք իր սրտին մէջ կըգտնէ զանիկայ :

() . Պայծառ յաղթանակ , ու նախանձաւորութեան արժանի : Բայց պսակուելէն ետքը ի՞նչ կընէ ո՛ւր կերթայ :

Մ . Առաքինութիւնները կըտանին զանիկայ հոն՝ ուսկէ որ մեկներ է . ու անկէց կըցուցնեն անոր միւս մահկանացուները , անոնց խոտորմունքները , մոլութիւնները և կեանքերնուն դժբաղդութիւնը , անոնց նաւաբեկութիւնը , և ինչպէս իրենց թշնամիները բռնեք զանոնք յաղթական հանդիս կըտանին . ոմանք Բնբարեխառնութիւնը աւեր կըտանի , ուրիշները՝ Ունայնասիրութիւնը , զասոնք՝ Բզահութիւնը , զանոնք՝ ունայն փառքը : Ս երջապէս ալ մէնքն ալ ասանկ մէյմէկ մոլութեան գերի եղած են , ու չեն կրնար խորտակել ան ծանր շղթաները որ կընեղեն զիրենք ու չեն թողուր որ սա երջանիկ բնակարանը մոռնեն . բայց բոլոր իրենց կեանքը , վըրովման ու խռովութեան մէջ է : Բս ճախորդութիւնները եկեր պատեր են զիրենք , անոր համար ոգիին կըթուլթուլենքը աջքի առջևէ կըսնցուցիւր են , ուստի ալ չեն

կրնար զանեւ երջանկութեան տանող ճամբան :

() • Իրաւունք ունիս . բայց ես կուզէի իմանալ թէ ինչո՞ւ համար առաքինութիւնները ճամբորդին կըցուցընեն ան տեղ ուանքը ուսկէ առջի անդամ անցեր է :

Օ • Անտոնը բան մը չէր հասկնար , յստակ չէր տեսներ եղած բաները : Երկ բայութեան ու անատուգութեան վիճակի մէջ , Տգիտութեան ու Մոլորութեան ծուխերէն կուրացած՝ գէշը լաւ , ու լաւը գէշ կըհամարէր . այսպէս կապէր ան ինչպէս և ուրիշները որ դեռ ան տեղումքը կը բնակին : Բայց հիմայ օգտակար բաներուն գիտութիւնը ստացած ըլլալով , իմաստուն կեանք մը կըվարէ , ու կարեկցութեան աչքով կընայի ուրիշ մահկանացուներուն մոլորութիւններուն :

() • Աս առարկաները աչքէ անցունելէն ետեւ , ի՞նչ կընեն . ո՞ր կուղի է իր բայութիւնը :

Օ • Ուր որ կըկամի . ամէն տեղ ապահովութեան մէջ է , ինչպէս որ էր Արամազդ Դիկտոսայ քարայրին մէջ : Ո՞ր կողմը որ երթայ , առաքինի կըլլայ , ու ամէն վըտանգներէն ազատ : Ըմէն տեղ փառօք և պատուով կընդունին զինքը , ինչպէս որ հիւանդները կընդունին իրենց բժիշկը :

() • Այլ վախճանի ան կնիկներէն , որոնց համար ըսիր թէ անգութ ճիւղներ են :

Օ • Ո՞չ , ալ չվախնար անոնցմէ . ալ չհարջըկուիր Յաւէ , Տրտմութենէ , Բնբարեխառնութենէ , Բզահութենէ , Բղբատութենէ , վերջապէս որ և իցէ նեղութիւններէն : Երբեմն գերի էր անոնց , հիմայ ինքը անոնց տէրն է , որոնք կըյարգեն կը պատուեն իր ունեցած մեծութիւնը :

() • Շատ աղէկ . բայց ըսէ ինձի ո՞վ են անոնք որ կըտեսնեմ բարձր տեղէն վար կիջնեն : Ամանք գլուխին պսակ ունին ու լախ ու ծանրաբարոյ դէմք կըցուցընեն . միւսները առանց պսակի են , ու ամէնուն երեսը յուսահատութիւն կերենայ , գլուխնին ծռելով ու դողալով իրենց տկարութիւնը կըցուցընեն , ու այնպէս կերենայ թէ կնիկները բռներ են զանոնք :

Օ • Անոնք որ պսակ ունին գլուխնին ,

բարեբաղդութեամբ ինչուան Հմտութեանը հասեր են . և ուրախութիւն կըցուցընեն աղէկ ընդունելութիւն զանեւուն համար անկէ : Միւսները որ առանց պսակի կը տեսնես , խստութեամբ վարուեր է անոնց հետ աստուածուհին , ու ետ կըբաշտին միշտ մոլութեան ու թշուառութեան հրամամանին հնազանդած . իսկ ուրիշները՝ որոնք որ թուրութեամբ կորսնցուցին իրենց քաջութիւնը , ինչուան Համբերութեան հասնելէն ետեւ , ետ կըդառնան , ու թախառահան կըբաղտոյն առանց ունենալու ստոյգ ճամբայ մը : Բնոնց ետեւէն դացող կնիկներն են , Յաւ , Տրտմութիւն , Խայտառակութիւն և Տգիտութիւն :

() • Բոլոր չարիքներէն ուրեմն անոնց ընկերութիւնը կըկազմես :

Օ • Այո . աս հտքինները՝ առջի շրջապատը դառնալէն ետեւ , Հիշտութեան և Բնբարեխառնութեան քով , ինքզինքնին չեն սանձեր , բայց ան նոյն վայրկեանէն կը սկսին կշտամբանք տալ Հմտութեանը և անոնց որ իրենց ընթացքը դէպի անոր կուղի են : Ողորմելի կըհամարին զանոնք ու դժբաղդ , որ մէկ դի կըձգեն քաղցր կեանքը , խիստը ու դժուարինքը ընտրելու , ու իրենց վայելած բարիքներէն կըզրկեն զիրենք :

() • Ի՞նչ անուն կուտաս դուն աս մէկալ կնիկներուն , որոնք ուրախ դէմքով Հմտութեան բնակարանէն կուգան :

Օ • Անոնք կարծիք կըսուին : Առաքինութեանց տաճարը մոտորները՝ Հմտութեան բնակարանը մոցուցին հիմա , ու վերստին կուգան որ ուրիշներն ալ ներս հրաւիրեն , ու իմացունեն անոնց որ առջինները արդէն սկսած են երջանկութիւն վայելել :

() • Առաքինութեանց քովն ալ կերթան ասոնք :

Օ • Ո՞չ . կարծիքը հրաման չունի գիտութեան բնակարանը մոտենլու . միայն թէ բաւական կըհամարի իրեն ճամբորդները Հմտութեան յանձնելու , և ետ կըդառնայ ուրիշներն ալ բերելու , ինչպէս կրնեն նաեւ որ իրենց վաճառքը դուրս հանելէն ետեւ , վերստին ճամբայ կըլին ուրիշ ապրանք բերելու :

Երգեստ :

Ենցած տարի ամառուան մէջ՝ ճամբորդութիւն մը ըրի Վարի Սէյնը ըստեա՞ծ գաւառին մէջը , և ան կողմերուն արդաւաստը և աղէկ մշակուած դաշտերուն զուարճալի երևոյթները վայելէլէս ետեւ , ուղեցի որ քիչ մը ատեն ալ ծովուն տեսարանովը զգօնեմ . վառնորոյ շարունակեցի իմ ճամբաս Տիէփէն ինչուան ւալը , ծովեզերքէն անցնելով , և միտքս զրի որ ետքը շագենաւը մտնելով Ումէն երթամ :

Են առաւօտը՝ որ ւալը քաղաքէն բո՞ւնուցայ , պարզ և գեղեցիկ էր օդը . արեգակը իր պայծառութեամբը՝ կարծես թէ բովանդակ բնութեան ջեղութիւն մը տուած էր : Բայց ես ինծի կանոն մը դրած եմ , որ ինչ և իցէ բանի մէջ ամենեւին վերջին վայրկեանին չսպասեմ . ինչու որ վերջին վայրկեանին սպասելով՝ մանաւանդ ճամբորդութեան մէջ , շփոթութեան մէջ կիյնայ մարդ , անհանգիստ կըլլայ , ու բնաւ զուարճութիւն մը չվայելէր : Ուստի գտցի նաւը մտայ ես , մեկնելու համար որոշուած ատենէն քիչ մը առաջ : — Դամբորդները սկըսան գալ , զանգակը կըզարնուէր ու ծովեզերքը զրուած սանդուխը չվերցուած * , նաւապետը բարձր ձայնով մը պուռայ , և շոգենաւը եկողները արտուրցուց որ շուտով գան :

Ես միջոցիս՝ նաւին տախտակամէն վրայ հանգիստ նստեր էի ես , ու չորս կողմս դիտելով կըզգօսանայի : Եննք որ կանուխ կեկ նաւը մտեր էին , ժամանակ ունեցան դիւրութեամբ իրենց կահկարասիքը տեղաւորել . և հիմա հանգարտ և ամէն հոգերէն ազատ , մեկմէկու հետ կըխօսակցէին , կամ ինծի պէս նստեր կըդիտէին եկող գացողները : Բայց ուշ եկողները՝ մեծ շփոթութեամբ տակնուվրայ կըլլային , իրենց ծրարները , սքնառկները և վերարկունները արտուրնօք նաւուն մէջը կը նետէին : Եսնց տազնապը և շարժմունք

ները տեսնողը՝ անշուշտ պիտի կարծէր որ տենդէն բռնուած կըչարչըրկուին . քանզի մէկը կըպուռար , թէ «Վէր է իմ մախաղըս» . միւսը՝ թէ «ւոլանոցս կորսնցուցի» . ուրիշ մըն ալ թէ «Վրջափ վախցայ որ շատ ուշ պիտի մնամ» : Օտնգակը վերջին անգամ մըն ալ զարնուեցաւ . բայց ճիշդ երբոր սանդուխը վերցունելու վրայ էին , շատ մարդիկ շունչերին կտրած հեալով դէպի շոգենաւը կըվազէին և կը պուռային որ սպասէ իրենց : «Ենչո՞ւ համար սասնկ ուշ կուգար , ըստ նաւապետը . չէ՞ք գիտեր թէ ժամը քանիին նաւը կեդէ . աղէ , ցատկեցէք ներս . թէ որ վայրկեան մըն ալ անցնելու ըլլար չէիք կրնար նաւը մտնել» : Ենատենը իր փողը հնչեցունելով , անիւները սկսան դառնալ , և նաւը հեռացաւ նաւահանգիստէն :

Դեռ աշուրներս ծովեզերքը դարձուցած ՚ի զննին կեցողներուն կընայէի , երբ որ մէկէնիմէկ երիտասարդ մը տեսայ որ արտորնօք կուգար , ու իր թաշկինակը շարժելով նշան կուտար թէ պիտի դայ շոգենաւը մըտնէ . նաւապետը ամենեւին հոգ չըրաւ աս բանը , և կերենար թէ միայն նաւը կառավարելու համար հարկաւոր եղած հրամանները տալու ուշադրութիւն կընէր , որպէս զի անվտանգ նաւահանգիստէն դուրս ելէ : Ենատենը երիտասարդը ցատկեց նաւակի մը մէջ , ու նաւավարները բոլոր ուժերնին թափելով կաշխատէին որ մեզի հասնին . երիտասարդն ալ սկստւ բարաձայն աղաղակէ : Եւ ընդ թերանը՝ նաւապետը տար ձայնը չլսելու զարկու , բայց վերջապէս առաւ իր փողը և պուռայ անոր՝ ըսելով . «Ենհը նար է որ կենամք . պետք էր որ կանուխ գայիր , շատ ուշ է» : Եւ աւելը ետ դարձաւ նաւահանգիստը , և շոգենաւը իր ճամբան շարունակեց :

Ենատենը սկսայ մտածել աս երիտասարդին՝ ու իմ ճամբուրնիկներս կըմտնէի . և կըսէի ինքիւմէս , թէ մենք ամենքս ալ ուրիշ ճամբորդութիւն մը պիտի ընեմք , ուրիշ հարկաւոր ճամբորդութիւն մը . և որչափ մարդիկ կան աշխարհիս մէջ՝ որ աս բանիս համար ամենեւին հոգ չեն ընէր , բայց ան մարդոցը պէս՝ որ մենք ծովեզերքը թողուցինք , կըտեսնեն թէ ուրիշները ճամ

* Երբեք պետք է որ Եւրոպայի մէջ ընդհանրապէս ծովեզերքները ծովուն մէջ երկնցած երկար ճամբաներ չենուած են , որ նաւերը կուգան ճիշդ անոնց կից կըկենան , և այսպէս նաւը ընդունուելու ապրանայ և ճամբորդներուն դիւրութիւն մը կըլլայ :

բայ կերէն կերթան զէպի Մտուծոյ Թա-
ղաւորութիւնը, և իրենք անհոգ կըմնան :
Մասնկները հապիւ երբեք միտքերնուն կան-
ցունեն Թէ իրենք ալ մէկ օր մը ան նոյն
ճամբորդութիւնը պիտի ընեն : Բայց օրհ-
նաւ է Մտուծոյ, որ զոնէ կըզտնուին
քանի մը հոգի, որոնք աղէկ համոզուած
ըլլալով հաւատոյ հարկաւոր ըլլալուն, ու
իրենց անմահ հոգիներուն արժողութեանը
վրայով, կանուխ մեր Տէրոջը Հիսուս Վր-
կիստաի կուգան, և իրենց առջի տարինե-
րը և կեանքին առաւօտը՝ Մտուծոյ կընուի-
րեն. և անտարակոյս անիկայ իր իմաստու-
թեամբը կըկառավարէ, իր խոստմունքնե-
րովը կըզօրացնէ դանոնք. ու իր աղօթ-
չնորհքը ապահովութեամբ կառաջնորդէ
անոնց զէպի յաւիտենական հանգիստը :
Բայց ոմանք իրենց հղճարցը արտորա-
լուն հակառակ՝ ետ կըմնան. ու աս կեան-
քիս զգալմունքներովը կապուած, հեշտու-
թիւններով մոլորուած, և աշխարհասէր
մարդոց օրինակներուն գերի հղած, օրէ օր
կըձգեն փրկութեան մեծ գործքը : Վիսոս, և
անոնք անշուշտ պիտի կորսուին Թէ որ Սուրբ
Հոգին իր մեծ ողորմութիւնովը անոնց սըր-
տին մէջը չթափանցէ աւետարանական ճշ-
մարտութեանց ձայնը, որպէս զի արտորան
հնազանդելու ան ձայնին՝ որ կարթնցնէ զի-
րենք : Բայց աւաղ, որչափ վտանգաւոր
է օրէ օր ձգել Մտուծոյ հրաւերին հնա-
զանդելը : Դամանակ կուգայ որ հիւանդու-
թիւնը մարդուս միտքը Թմրութեան մէջ կը
ձգէ, որ անատենը չեն կրնար մարդիկ կար-
դալ կամ ականջ դնել Մտուծոյ ձայնին սի-
րոյ պատգամներուն : Ի՞նչթերցող, քու
յաւիտենականութեանդ օգուտը՝ մեռնելու
ատենիդ մի՞ ձգեր, ինչու որ զուցէ ուշ կը
մնաս : Դոգենաւը չկրցաւ կենալ. Ժամա-
կը լրացածին պէս նաւապետը այլ ևս չկա-
մենար իր նաւը մարդ առնելու : Ինոնք
որ՝ ոչ իրենց խղճմտանքին ձայնը մոիկ կը-
նեն և ոչ Լեւոտարանին հրաւերը. և ո-
րոնք զէմ կըկենան ամենակարողին Մ-
տուծոյ, մինչև իրենց կեանքին վերջին կէ-
տը, կարելի է որ կանչեն և լսող մը չըլլայ
իրենց. կարելի է որ աղաղակեն և փուճ
տեղը աղաչեն. Լուս. Թ. 24, 28 : ՀԱՄԻ
է ընդունելի Ժամանակը. ՀԱՄԻ է փրկու-
թեան օրը : Թ. Կրթ. Գ. 2 :

Ողբիլ պէտք է աղապստներուն :

« Եթեքայ և դուք ինծի ուտելիք տուէք : Սերկ էի, և
դուք զիս հագուեցուցիք » : Սատթ. Իե. 35, 36 :

Լ. Փարիզու Ռաւլամէնդին անգամ-
ներէն մէկը այցելութեան գնաց մէկ օր մը
հարուստ սեղանաւորի մը տուն, սաստիկ
ձմեռուան մէջ. և շատ դարմապաւ, տեսնե-
լով որ աս մեծատունին բոլոր սենեակներն
ալ առանց պատառակալի էին : Ուստի
հարցուց անոր Թէ ինչո՞ւ համար պատե-
րուն վրայ պատառակալ դնել տուած չես,
որ սենեակները տաք մնան աս դառնաշունչ
եղանակիս մէջը : Սեղանաւորը տարաւ
զանիկայ մէկ սենեակ մը՝ ուր տեղ աղքատ
ընտանիք մը դրած էր, խղճալով անոնց
աղքատութեանը վրայ, և ըսաւ. « Տէ՛ս,
աս ողորմելիները իմ սենեակներուս պատե-
րէն աւելի ցուրտ կըզգան » :

Բ. Լ. Ֆրեմոս Բնգղիայի Թագաւորը՝
շատ անգամ մէկզմէկու վրայ նոր յաղ-
թուած էր. ու Դանեցիները միշտ առաջ
երթալով իր երկրին կըտիրապետէին. վասն
որոյ ստիպեցաւ որ իրեն քանի մը հաւա-
տարիմ ծառաներուն հետ երթայ քաշուի
իր մէկ առանձին բերդը : Բայց ան պա-
շարները որ կրցեր էին ասոնք իրենց հետ
տանիլ՝ շուտով հատան, և միայն մէկ հաց
մը մնացած էր, երբ որ մուրազկան մը
դղեակին դուռը զարկաւ և ողորմութիւն
խնդրեց : Դառանները ետ դարձնելու վրայ
էին աղքատը՝ առանց բան մը տալու անոր.
բայց Թագաւորը՝ իր յոյսը բոլորովին Մ-
տուծոյ դրած, աղաղակեց. « Տուէ՛ք սա աղ-
քատ քրիստոնէին մեր ունեցած հացին կէ-
տը : Ինիկայ որ կարող եղաւ հինգ հացով
և երկու ձուկով հինգ հաղար հոգի կերակ-
րել, անշուշտ կարող է կէս հացը մեղի
բաւական ընելու » : Դառանները իսկոյն
հնազանդեցան, և Լ. Ֆրեմոսի հաւատքը
փուճը չելաւ. քանզի իր հաւատարիմ
հպատակները անմիջապէս դղեակը հա-
սան առատ պաշարներ բեռնաւորած, Թա-
ղաւորին և իր ծառաներուն համար :

Ինչ բանի վրայ որ աւելի սէր ունենամք, ա-
նիկայ խաչ մը պիտի ըլլայ մեզի Թէ որ մենք
Վրիստոսինն եմք, կամ մէկ անէծք մը՝ Թէ որ
անորը չեմք :

Այս բանի մը պատճառով ասիական գիւղերը
նշուաւ :

Ս. Սառնիկէ՝ պատմելով իր ինչ կերպով բը-
նակիլը՝ Վոնկա կղզիին մէջ կընկարագրէ զար-
մանքը և շփոթութիւնը ան տեղի քանի մը երկ-
րացոց առաջին անգամ գիր տեսնելուն : Երկայ
շատ ատենէ՝ ի վեր գերի ըլլալով վայրենիներուն
քովը, վերջապէս իր միտքը եկաւ աս խորհուրդը
[Թէ իր ազատութիւնը կրնայ ձեռք բերելու, թէ
որ կարենայ իր վրայով լուր հասցունել Եւրո-
պա . վասնորոյ քիչ մը վառօդ լուծանել տալով
ջուրի մէջ՝ իր վիճակին վրայով քանի մը խօսք
գրեց, և գողտուկ յանձնեց իր նամակը աս վայ-
րենի մարդոց գլխաւորներին մէկուն, աղաչելով
որ նոյն թուղթը՝ ան կողմերը երեցած առաջին
նաւուն հրամանատարին տայ :

Յինու անունով թագաւորը կղզիին, աս որ
լսեց սկսաւ կասկածիլ . կանչել տուաւ ան
գլխաւորը՝ որուն տրուած էր նամակը, և զա-
նիկայ անոր ձեռքէն առնելով՝ ամէն կողմը նա-
եցաւ զննեց . բայց տեսնելով որ անիկայ բան մը
չիմացունէր իրեն, ուրիշ մէկուն մը որ նաւակ-
ծութենէ ազատեր էր, հրամայեց որ բացատրէ
իրեն թէ ինչ կընշանակէ ան : Եւ մարդը
հասկըցող՝ թէ մէկ աղերսագիր մըն է առաջին
անգամ հասած նաւու մը նաւապետին գրուած,
որպէս զի միջնորդութիւն ընէ Յինուին քովը, և
համոզեց զանիկայ որ ազատութիւն տայ Ս.
Սառնիկէին և իր ընկերներուն : Եւ կերպով իր
միտքը հասկըցնելը՝ անիմանալի բան մըն էր Յի-
նուին համար . նամակը ձեռքը առաւ և նորէն
սկսաւ քննել :

Ա երջապէս փափագելով աւելի տեղեկութիւն
մը ունենալու, խրկեց կանչել տուաւ Ս. Սա-
ռնիկէն ու ըսաւ անոր որ քիչ մը բան գրէ :
Եւ ատենը Ս. Սառնիկէ գրեց, Յինու : Թա-
գաւորը կանչեց միւս օտարականը և ըսաւ որ
թղթին մէջինը կարգայ : Յինու իր անունը
լսելով՝ մէկէն առաւ թուղթը ու ամէն կողմ
գարձաւնելով՝ “Երկայ ինձի ջնմանի, ըսաւ, և
ոչ ուրիշ մէկուն մը . ո՛ր էն իմ ոտքերս եւիմ
գրուիս . ի՞նչպէս գիտէք որ ասիկայ ես եմ” :

Ետը վրայ Ս. Սառնիկէ հասկըցուց թագա-
ւորին որ կրթեալ ազգերը՝ գրին միջոցով լուր կը
խրկեն մէկմէկու շատ հեռաւոր տեղուանքէ, թէ
կրճալեն և կըկնքեն զանոնք, որ տանողը չընտր
գիտնալ թէ ինչ կըպարտութիւն . աս ալ ը-
սաւ որ իր երկրին մէջ՝ տոց գիր գրել կըսորվե-
ցունեն և գրուածը կարդալ : Յինու անմիջա-
պէս բոլոր նաւակոծեալ մարդոց աս փորձը
կրկնել տուաւ . բայց շատերը կարգաւ գրել
չիտէին : Եւ ատենը ազգականց Յինու ըսե-
լով . “Ո՛հ, ասի՛նչ բան է . իմ կղզիիս մէջը ա-
մէն մարդ նետաձգութիւն կըսորվի, քանզի ա-
սիկայ է մեր գիտցած մի միայն արհեստը . ի՞նչ-
պէս կըլլայ ուրեմն որ ձեր երկիրը քանի մը
մարդիկ կան որ չեն գիտեր ան մեծ արհեստը
որն որ հիմա ինձի ցըցուցիք” : Ի՞նչ պիտի ը-
սէր արդեօք բարեսիրտ Յինու . թագաւորը թէ
որ գիտնար որ խիստ շատ է տգէտներուն թիւը
նաւ մեր մէջը :

Ճարտարամիտ փաստաբանի մը հետքը :

Ի վէս Տըքէրմարկէն* անունով մէկը որ շատ
անուանի և բարի մարդ մըն էր, որ ետքը սուրբե-
րուն կարգը դասուելով՝ սուրբ Իվէս կոչուե-
ցաւ, որ ատեն Սէն** քաղքի եկեղեցական դա-
տաւորը և աւագարկաւապէն էր, որ ետքն ալ
Կրիկիէ† քաղքին մէջ աս պաշտօնները ունեցաւ,
անխոնջ փաստաբանութիւն կրնէր ի նպաստ
այրի կնիկներուն, որբերուն և ուրիշ խղճալի
անձանց, և ոչ միայն եկեղեցւոյ գաւիթներուն
մէջ և Պըրդանիի†† ուրիշ տեղուանքը, այլ և փա-
րիզու Բաղլամէնգին մէջ անոնց դատերուն պաշտ-
պանութիւն կրնէր, մինչև անգամ՝ արքունեաց
մէջ, ինչպէս որ գրուած է ալյոյի Պատմութեան
ըսուած գրքին մէջ, որ Լուի Ժամ թագաւորը
շարագրեր է, ուր տեղ նշանաւոր պատմութիւն
մը կըկարդացուի որն որ մոռցեր են Իվէսի
վարքին մէջ գրելու :

... Երկու անձիք որ մէկ տեղ ծամբորդութիւն
կրնէին, Պուր քաղքի մէկ իջևանը հասնելով,
կաշիէ քսակ մը յանձնեցին վանատուր կնոջը
որ որբեարի մըն էր, և աղաչեցին որ մարդու
չտայ ան քսակը բայց իրենց երկուքին մէկ-
տեղ յանձնէ : Հինգ վեց օր անցնելէն ետեւ
ատենց մէկը մինակ եկաւ և ինզրեց քսակը,
պատճառելով որ երկու ընկեր կըպարտաւորին
դրամ վճարելու մէկուն քաղքին մէջը : Ա ա-
նատուր կնոջը միտքը չգալով՝ կամ չհարհելով
ան պատուէրը որ տրուած էր իրեն, շուտ մը
քսակը յանձնեց անոր, որ խկոյն հեռացաւ անկէ
ու մէյմըն ալ իջևանը չգարձաւ : Սիւս ծամ-
բորդը իրիկուան դէմ գտնալով և իր ընկերը
չգտնելով, հարցուց թէ ո՛ր է : Ա անատուր
կնիկը միամտութեամբ պատասխան տուաւ թէ
քսակը անոր յանձնելէն ետեւ ալ մէյմըն ալ
չտեսաւ : Եւ ատենը զարմառք ցուցնելով աս
մարդը աղաղակեց թէ տունս փրաւ, ինչու որ ան
քսակին մէջ շատ ստակ ունէի ես : Եւ պա իմա-
ցուց կնոջը որ իրենց ըսածին հակառակը ընելուն,
և քսակը մէկուն միայն յանձնելուն որ ատեն
միւսը հոն չէր, դատաստանի պիտի քարշէ զին-
քը : Եւ յիշաւի քաղքին դատարանը կանչել
տալով կըպահանջէր որ քսակը տայ : Կնիկը
միամտութեամբ խոստովանեցաւ աս բանին ինչ-
պէս ըլլալը . և ասոր վրայ դատախազն ալ հաս-
տատեց որ ան կաշիէ քսակին մէջը հարիւր ոսկի
ունէր, ասկից զատ խկ մը մուրհաշներ և ուրիշ
պիտանի թղթեր . անանկ որ աս խեղճ որբեարին
քիչ մնաց որ պիտի դատապարտուէր : Բայց
Ժամանակին հասնելով հոն Իվէս, աս պատիժէն
աղատեց ողորմելի կնիկը ճարտար նարք մը բա-
նեցունելով : Բանցիկ երկու կողմը անիկ ընելով
գործը հասկնալէն ետքը, խրատեց կնիկը որ ը-
սէ թէ նարը գտած է կաշիէ քսակը ձեռք բերե-
լու, և թէ պատրաստ է ցուցնել զանիկայ, բայց
ուրոյը իր խօսքին համեմատ՝ կըպարտաւորի
բերել իր ընկերը, որպէս զի կարող ըլլայ իրենց
երկուքին յանձնել : Վատաւորը իրաւունք

* Yves de Kœrmartin. ** Rennes. † Triguier.

†† Bretagne.

տուաւ աս պատասխանին և հրամայեց որ այնպէս
ընէ : Բայց քահար պահանջողը չկամելով կամ
չկրնալով իր ընկերը բերել , քահար որբեւարին
ոչ միայն աղատեցաւ դատաստանէն , այլ և իմա-
ցունեցաւ որ խաբերայ մարդիկ են ասոնք , որ
գաղտուկ խօսք ըրեր են եղեր վաճառուր . կնոջը
վնաս հասցունել , վասնորոյ քահար ուղղը ընկերը
խստիւ պատժուեցաւ :

Եւսարկու-Թիւնի արհեստը :

Եւսարկու-Թիւնը՝ ստեղծող շատ աւելի
վտանգաւոր և շատ դժուարին էր , որ հի-
մա անանկ չէ : Սարգ չէր համարձակէր որ
շատ առաջ երթայ ու անդունդը (էնկին)
ելլէ . հապա եղերքին մօտ կընաւարկէին
ու երբէք չէին հեռանար ցամաքէն : Սուրբ
Վիրքը՝ Սողոմոնի երկու նաւատորմին վը-
րայով կըխօսի , որն որ Լոգոմայ երկիրը՝
Կարմիր ծովուն եղերքը պատրաստեց , որոնց
նաւաստներուն մէկ մասը Տիւրացիներ
էին , ևն . Եւսարկու-Թիւն : Եւս նաւերուն մէկ
մասը Սովինի կերթային՝ ոսկի , անտաշ
փայտ և պատուական ակունք բերելու (Գ
Թ . 27 , 28 : 7 , 11 .) միւսը՝ Թար-
սիս կերթար և կուգար երեք տարին ան-
գամ մը , ու ոսկի , արծաթ , փղօսկր , կա-
պիկներ և սիրամարմնի կըբերէր* : Եւ
Սուրբ . Թ . 21 : Եւ ծովային գործաւուր-
Թիւնները՝ որոնք տնտեսական օրա բան մը
ըսել չեն , անասունը աշխարհք կըդարմա-
րունէր : Հասոնի և արգոնաւորաց ճամբոր-
դութիւնը , քի՛ Սարմարան և Սի ծովը
նաւարկութիւն ընելը հրաշալի բան մը կը
թուէր ան ասոնի մարդոյր : Բայց ի՞նչ
պիտի ըլլան ասոնք հիմակուան նաւարկու-
թեանց հետը որ բաղդատուին նէ : Կողմա-
ցոյցը հնարունքին հետէ , որ 1210ին եղաւ ,
աւելի վստահութեամբ և ապահովութեամբ
ծովերէն կանցնին կերթան նաւերը : Բան
զի կողմնացուցին ասեղը մագնիսով շրփ-
ուած , միշտ զէպի հիւսիս դաւնալով , կի-
մացունէ նաւորդին թէ որ կողմը կըգտնուի .
և ուր կերթայ : Վիշելուան մթութեան
մէջը՝ և խիստ ամպամած օրերը , Ովկիա-
նոսին մէջ աս գործին կաւաջնորդէ իրեն
և ծովին մէկ ծայրէն մէկալը կըտանի դա-
նիկայ : Սիւայն ան ժամանակէն ի վեր է որ

* Հիշուած կենդանիներէն յայտնի կերակայ թէ ան (Սարմար
հիմակուան թարմութեւն , և անոր ուր անդ ըլլալը դիտողած
է :

Ովկիանոսին ամէն կողմը նաւարկելով՝ նոր
երկիրներ գտնուեցան , որոնց վրայով մէկը
Ծանօթութիւն չունէր : Եւսպէս՝ ուրիշ
գտնուած տեղուանքը զանց առնելով , 1486
ին Վլուխ Բարեյուսոյ ըստած տեղը գըտ-
նուեցաւ , 1492ին՝ Լմերիգան գտան , և
աշխարհիս բոլորտիքը առջի անգամ ճամ-
բորդութիւն ըրաւ , 1519ին , Կերտինանտ
Սակեւնոսը : Եւսարկու-Թիւնէ առաջ ե-
կած անթիւ օգուտներուն վրայ թէ որ մտա-
ծելու ըլլամք , կըտեսնեմք թէ որչափ իրա-
ւունք ունէր Սողոմոն հրաշալի բաներուն
կարգը դասելու նախ ի շահեղ ծովուն մը :

Բայց թէպէտ կողմնացոյցը հնարուած
է , այսու ամենայնիւ ծովու վրայ ճամբոր-
դութիւն ընելը դեռ շատ վտանգաւոր է ,
և չկայ նաւորդ մը որ փորձը ինքնին առած
չըլլայ Եւսարկու մարդարէին աս վստի խօս-
բերուն . « Եւսարկու ծովը իջնողները , ու
մեծ ջուրերու մէջ գործ գործողները , Տե-
րոջը գործքերը ու անոր հրաշքներ ան-
դունդներուն մէջը կըտեսնեն : Վասն զի ան
կըսէ՝ ու մըրկալից հովը կըհանէ , կըբար-
ձրացունէ անոր ալքները : Կըկինքը կե-
լին ու անդունդը կիջնեն , ու անոնց անձե-
րը նեղութեան կըհալին : Վիտով մարդու
պէս կըգողգողան ու կերերան , ու անոնց
բոլոր խմաստութիւնը կըկործանի : Եւ Տե-
րոջը կաղաղակէն իրենց նեղութեանը մէջ ,
ու կըփրկէ անոնք իրենց տաւաղանքնե-
րէն : Սրբիկը հանդարտութիւն կըդար-
ձունէ , ու անոր ալքները կըդադարին : Եւ
անոնք կուրախանան որ դադարեցան . ու
կաւաջնորդէ անոնց իրենց ուղած նաւա-
հանգիստը : Թող գոհանան Տերոջմէն անոր
ողորմութեանը համար » : Սուրբ . Թ . 23—
31 : Բայց ամէնքը այսպէս երջանիկ չեն ,
և Եւսարկու հովերը ու ծովերը կըհա-
ղանդին » (Սուրբ . Թ . 24) Թող կուտայ երբե-
մէն որ միծամեծ վտանգներ պատահին :
Վրեթէ տարի չանցնելը որ նաւարկութեան
ցաւալի գիպուածովը խել մը գերդատան-
ներ իրենց մեծը չկորսնցունեն , մայրիւր ի-
րենց զաւկները , վաճառականներ իրենց
ինչքը , ու երբեմն ալ այնպիսի պարա-
զաներով որ սոսկում կուտան մարդուս :
Եւս դիպուածները մոտածելով՝ մոքերնիս
բերեմք Պողոս առաքեալին խրատը , որ ան

ալ էլէն անգամ նա-մբէն-նէան հանդիպէր էր .
(Թ Կրնիւ. ԺԹ. 25,) ու զգոյշ կենամբ նա-
նի-նի-ն չաշխարհ հա-տարի մէջ : Թ. Տիմ. Թ.
19 :

Այսպէս ինչ փոքր տղայի մը :

Պարզիկ ծովուն Ռիւսէն ըստած կողմին
մէջ , ուր տեղ սաստիկ ձմեռ ըլլալով
չափազանց ձիւն եկեր էր յունկարի ամու
գիշեր մը , հետեւեալ օրը կէս օրուան ժա-
մանակին՝ ութը տարեկան աղջիկ մը աս
կողմին մէկ գեղի զարտուունէն ելաւ որ
տուն դառնայ իր ծնողացը քով . որոնք ան-
կից քիչ մը հեռու տեղ կը բնակէին : Սա-
կայն բոլոր ճամբաները ձիւնով ծածկուած
ըլլալուն՝ շիտակ ճամբան կորսնցուց և մին-
չև իրիկուն դաշտերուն մէջ աս դիւ ան դին
թափառեցաւ : Բայց երբ որ մուտք կոխեց
նստաւ քարի մը վրայ խիստ յոգնած , և
շատ լալէն ետքը քնացաւ հոն տեղը : Իր
ծնողքը՝ կարծելով որ աղջիկը իրենց աղ-
գականներէն մէկուն տունը մնացեր է ,
ինչպէս որ շատ անգամ ասանկ կընէր
գէշ օր եղած ատենը , հետեւեալ օրը աղ-
գականին տունը գացին որ առնեն տուն բե-
րեն զանկալ : Բայց երբոր տեսան թէ հոն
չէ , ու առջի օրը զպրոցէն ելեր է տուն
դառնալու , սկսան լալ ողբալ և գրեթէ
յուսահատութեան մէջ էին թէ ալ պիտի
չտեսնեն իրենց զաւակը : Բն գիշերն ալ
նորէն շատ ձիւն եկեր ու խիստ բարձրացեր
էր գետնէն : Բջ կանը հայրը , մայրը և
իրենց բարեկամները , ամէնքն ալ ճամբայ
կելլեն զանկալ փնտրուելու , որն որ կը
կարծեն թէ անշուշտ մեռած պիտի գտնեն :
Լքկար ժամանակ փուճ տեղը փնտրուելէն
հետեւ աղջիկը , անոր խոյրը տեսան որ հո-
վը տարած էր հոն , և քիչ մը ատենէն հոքն
ալ նոյն խի աղջիկը որ մինչև գլուխը ձիւ-
նին տակը թաղուած էր : Բնիկայ ամենեւին
տկարութեան նշան մը չէր ցուցներ և ու-
րախութեամբ կը պատասխանէր ինչ որ կը
հարցունէին իրեն , և կըսէր որ բոլոր գի-
շերը հանգիստ քնացայ ու առտուան դէմ-
շուն մը եկաւ մէկ զի ըրաւ ձիւնը՝ որ սկսեր
էր բոլոր գլուխս ծածկելու , ու հոքն ալ
արեւը տաքցուց զիս : Հարցուցին անոր թէ
չվախցա՞ր դուն . «Ո՛չ պատասխան տուաւ ,

ես ինք իրենա կըսէի թէ անշուշտ հայրս
չուշանար հիմայ կուգայ» :

Եւ յիշաւ հայրը եկաւ . բայց Լքկնա-
ւոր շօրը առաջնորդութեամբը՝ որ ներկայ
է ամէն տեղ , որ տեսաւ աս աղջկանը վը-
տանդը և մինչև իր աղատութեան ժամանա-
կը անվնաս պահպանեց : Պարտիմը ուրե-
մըն մեր փորձութիւններուն , հիւանդու-
թիւններուն և կենաց ամէն զիպուածներուն
մէջ ըսել աս աղջկանը պէս . «Ո՛րք շա-
րը չուշանար հիմայ կուգայ» :

Կըն-նի-նը հարստ-նիւնէն աղէկ է :

« Բոլորովին ոչինչ գործ մը կրնէ ան մարդը
որ կըջնայ միայն իր որդեցը ստակ վաստակելուն
և հարստանալուն ճամբաներ գտնել , ու զանց
կրնէ անոր հարկաւոր եղած կըթուծեանը հոգ
տանիլ : Բնակ ընողը կընմանի անխեղ մարդու
մը՝ որ յարգը կըթողուէ՝ և ծանրագին քարերը
կըցրուէ : Թող ծնողքները մեծ փութով
ջանք ընեն իրենց որդեցը միտքը և բարոյականը
մշակելու , և անշուշտ շատ անգամ անոնք իրենց
աշխատանքին փոխարէն հարկաւոր պատու
պիտի քաղեն :

Բանի մը խրատ՝ ծնողներէն :

1. Բնենին մի հրամայեք , թէ որ նազան-
գեցունելու միտք չունիս :
2. Որքան կանուխ որ կրնաս , ջանա բացարձակ
և կատարեալ իշխանութիւն մը ստանալ քու
զաւակդ վրայ :
3. Բնաւ մի՛ խոստանար մէկ բան մը՝ որն որ
կատարելու չես :
4. Բնենին մի՛ խաբեր քու զաւակդ , նայ-
ուածքով , խօսքով կամ գործքով :
5. Քու զաւակդ քեզի նազանգեցունելու
համար բնաւ սուտումուտ վախեր մի՛ տար անոր :
6. Օաւկիդ վրայ յաճախ յանցանք մի՛ գաներ :
7. Բնաւ քու զաւակդ ուրիշներուն քովը
չգոյնի կամ չպարսաւես . քանզի առաջինը հպար-
տութիւն կըսորվեցունէ անոր և փառասիրու-
թիւն , իսկ վերջինը բարկութիւն և թշնամու-
թիւն :
8. Միշտ հաւատարմութիւն բանեցուր քու
կառավարութեանդ մէջ :
9. Բնենին գաւազան մի՛ գործածելու երբոր
բարկացած ես :
10. Չըլլայ որ տաս զաւակդ ան բանը՝ որուն
համար որ կուլայ կամ կըթախանձէ :
11. Երբոր տղադ քեզի բան մը կըխօսի , պա-
տասխան չտալով մի՛ բարկացուներ զանկալ ,
բացի ան ատենէն որ հարկ չէ պատասխան տալ :
Բայէ որ շուտով իմացունես անոր ինչ բան որ
կուզէ տեղեկանալ քեզմէ :
12. Մի՛ հրաժարի անոնց տղայական փա-
փաքները լեցունելու , երբոր կըտեսնես թէ ի-
րենց ուզած բանը անմեղ է և գէշ հետեանք չու-
նի :